Հանդիպմանը Վեհափառ Հայրապետն ուրախություն հայտնեց, որ երկու երկրների հարաբերությունները զարգանում են նաեւ մարզային մակարդակի վրա՝ գոհունակությամբ հաստատելով Արագածոտնի եւ Լենինգրադի մարզերի միջեւ առկա բարեկամությունը եւ ակտիվ համագործակցությունը: Նորին Սրբությունը նշեց, որ նման գործակցության շնորհիվ պահպանվում են այն բարի ավանդույթները, որ դարեր շարունակ ձեւավորվել են երկու ժողովուրդների միջեւ՝ նպաստելով նաեւ փոխճանաչողության ու ջերմ հարաբերությունների առավել սերտացմանը:

Անդրադառնալով ՌԴ Լենինգրադի մարզում բնակվող հայորդիներին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր մասնավոր գնահատանքը հայտնեց նահանգապետին՝ հայ ժողովրդի զավակների նկատմամբ մարզի իշխանությունների կողմից մշտապես դրսեւորվող ուշադիր եւ հոգատար վերաբերմունքի առիթով, որի շնորհիվ հայ համայնքը լիարժեքորեն ապրում է իր ազգային-հոգեւոր ու մշակութային կյանքով՝ իր ներդրումն ունենալով նաեւ մարզի զարգացման գործում:

Զրույցի ընթացքում խոսվեց նաեւ երկու ժողովուրդների կյանքում քրիստոնեական հավատի եւ արժեքների դերակատարության, ինչպես նաեւ Արագածոտնի մարզում գտնվող նշանավոր սրբատեղիների եւ հայ ժողովրդի կյանքում դրանց կարեւոր նշանակության մասին:

Հանդիպմանը ներկա էր նաեւ Արագածոտնի թեմի առաջնորդ Տ. Մկրտիչ եպիսկոպոս Պռոշյանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՌԴ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ

Հոկտեմբերի 12-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ռուսաստանի Դաշնության փրանսպորտի նախարար, ՀՀ եւ ՌԴ տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի համանախագահ Մաքսիմ Սոկոլովին՝ ուղեկցությամբ ՌԴ-ում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Օլեգ Եսայանի:

Հանդիպմանը ՀՀ եւ ՌԴ տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի համանախագահն ուրախություն հայտնեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետ հանդիպման առիթով՝ տեղեկացնելով անցած օրերի ընթացքում հանձնաժողովի կատարած աշխատանքների մասին:

Զրույցի ընթացքում Վեհափառ Հայրապետը գոհունակություն հայտնեց երկու երկրների պատվիրակությունների արդյունավետ համագործակցության առիթով՝ ընդգծելով, որ այն համահունչ է երկու ժողովուրդների դարավոր բարեկամությանը եւ եղբայրական ոգուն: Նորին Սրբությունը ողջունեց Հայաստանի եւ Ռուսաստանի տնտեսա-

կան գործակցության շրջանակներում իրականացվող համատեղ ծրագրերը՝ հաջողություն մաղթելով միջկառավարական հանձնաժողովի հետագա աշխատանքներին:

Հանդիպմանն անդրադարձ կատարվեց երկու երկրների հոգևոր կյանքին, Հայաստանյայց Առաքելական եւ Ռուս Ուղղափառ Եկեղեցիների միջև առկա ջերմ փոխհարաբերություններին: Խոսվեց նաեւ հասարակական կյանքում հոգևոր արժեքների կարեւոր դերակատարության մասին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ՄՈՍԿՎԱՅԻ ԿՐՈՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԲԱԺՆԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ

Հոկտեմբերի 12-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Մոսկվայի (Ռուսաստանի Դաշնություն) միջտարածաշրջանային համագործակցության, ազգային քաղաքականության եւ կրոնական կազմակերպությունների հետ կապերի բաժնի ղեկավար Յուրի Արտյուխին:

Ողջունելով հյուրին՝ Նորին Սրբությունը նշեց, որ նման այցերը համայն հայության հոգևոր կենտրոն հնարավորություն են ընձեռում լավագույնս ճանաչելու Հայոց Եկեղեցին եւ նրա հոգևոր արժեքները: Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ ընդգծեց, որ երկու երկրների միջև հարաբերությունները ջերմ են ինչպես պետական, այնպես էլ հոգևոր մակարդակում:

Զրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց Հայաստանյայց Առաքելական եւ Ռուս Ուղղափառ եկեղեցիների ջերմ հարաբերություններին, ինչպես նաեւ ՌԴ-ում հայ համայնքի եւ Նոր Նախիջեւանի ու Ռուսաստանի հայոց թեմի կյանքին: Այս առիթով Նորին Սրբությունն իր գնահատանքը հայտնեց պրն. Յուրի Արտյուխին՝ Մոսկվայի հայ համայնքին եւ հայոց թեմին ցուցաբերվող զորակցության համար:

Իր հերթին Յ. Արտյուխը, ուրախություն հայտնելով հանդիպման առիթով, Նորին Սրբությանը փոխանցեց Մոսկվայի քաղաքապետ Սերգեյ Սոբյանինի ողջույնները ու մաղթանքները: Իր խոսքում Յ. Արտյուխն ընդգծեց Մոսկվայում կառուցվող հայկական եկեղեցական ընդարձակ համալիրի եւ առաջնորդանիստ տաճարի կարեւորությունը՝ նշելով, որ այն զգալի դերակատարություն կունենա հայ համայնքի հոգևոր կյանքում:

Հանդիպմանը ներկա էր նաեւ Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ